دير الارمن بالقدس الشريف عاما رده سيف الدين المقر الشرفى
الانصارى وساءل فى ابطال ذلك ليسطر فى الصحايف الشريفة بتاريخ
اربع وخمسين وثمانماية من الهجرة الشريفة ملعون ابن ملعون وعليه
لعنة الله تعالى من احدث ضمانا او جدد مظلمةً

Յետ վախճանի Մարտիրոս եպիսկոպոսի և անցանելոյ սուղ ինչ ժամանակի աւերեալ քայքայեցաւ վերելից աստիճանք սանդխոյն եկեղեցւոյն Վերնատան 'ի Ս. Յարութիւն, յորմէ չէր հնար ելանել միաբանաց և ուխտաւորաց, և այլազգիք քաղաքին չտային թոյլ նորոգել զայն, թէ և բերեալ էին հրաման 'ի Սուլթանէն, որպէս յայտ է 'ի դատաստանագրոյն զրեալ Մէհէմմէտ ապու էլ Ֆաթի դատաւորէն, այսպէս։

Գերիքն Հայոց որ յԵրուսաղէմ ազգ արարին մեզ, թէ եմք յաղքատութեան և 'ի տկար վիճակի. յարեան 'ի վերայ մեր 'ի դատարանէ վերակացուք կալուածոց (վագֆ). զտեղի աղօթից մերոց զԳողգոթայ 'ի տաճարին Ս. Յարութեան, ուր ժողովէաք յաւուրս տօնից և 'ի ժամ աղօթից՝ յափշտակեցին զայն 'ի ձեռաց մերոց ազգն Վրաց, իսկ քարեայ աստիճանք այժմեան եկեղեցւոյն քակեալ եւ աւերեալ է, և 'ի մտանելն մեր 'ի տաճար անդր, չգտանեմք տեղի ժողովելոյ և աղօթս առնելոյ. հասին մեզ եւ ուխտաւորաց մերոց վնասք մեծամեծք, երկոքին դատաւորքն եռուն մեզ վճիռ չինել զաստիճանսն, եւ ունիմք հրովարտակ վասն այնր։ Յետ այսր դանկատանաց դատաւորն և այլազգիք եռուն հրաման դերեաց (1) Հայոց չինել զաստիճանսն ըստ առաջնոյն, որպէս տրամադրէն վճիռք դատաւորաց և արքունի հրովարտակն։

Ազգն Վրաց ձեռնտուութեամբ թագաւորին իւրեանց և զօրութեամբ Սուլթանացն Եգիպտոսի, տիրեցին Վիճակին Հայոց, եւ զի առաւել եւս նկուն արասցեն զնոսա, խորհեցան գրաւել նաեւ զվանս Ս. Յակոբայ, որպէս յարուցին վէճս յաւուրս Սարգսի, եւ չ'չահեցան ինչ. թէպ

(1) Գերեալք յաշխարհէն Կիլիկիոյ, և ամենք 'ի նոցանէ ազատեալ 'ի գերութենէ եկեալ են յուխտ Յերուսաղէմ։